

ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆԻ «ԸՆԿ. Բ. ՓԱՆՋՈՒՆԻ» ԵՐԳԻԾԱՎԵՊԻ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Սաթենիկ Մելիքյան

Արվեստագիտության թեկնածու

Խ. Արուստի անվան ՀՊՄՀ

ՀՀ, Երևան, Ալ. Մանուկյան 13

Էլ. հասցե՝ satik-melikian@mail.ru

ORCID: 0000-0001-5489-2794

Հոդվածը ներկայացվել է 20.01.2023, գրախոսվել է 01.03.2023, ընդունվել է տպագրության 25.04.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.1-208

Ամփոփում

Սփյուռքահայ կյանքում Երվանդ Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի» գրքի հրատարակումը մշակութային նշանակալի երևույթ էր: Երգիծավեպը ձևավորեց Ալեքսանդր Սարուխանը (1898-1977), որը նորագույն շրջանի հայկական մշակույթի պատմության մեջ մտել ու գնահատվում է որպես հմուտ ծաղրանկարիչ: Գրքի ընթերցում-դիտումը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր էջում առկա է գերադրականը՝ բուռն խրախճանքը, տուրուտմիտը և այլն: Հերոսների պահվածքը (Փանջունու և իր համախոհների), շարժուձևը, դիմախաղը, կեցվածքները հասցված են ծայրահեղ լարվածության: Եվ այդ գերադրականը կատարվում է ռեալիստորեն մանրակրկիտ պատկերված, առօրեականությամբ տոգորված տեսարանների՝ իբրև թատերական դեկորացիաների դիմաց: Նյութի նման պատկերավորումը որոշակի գրավչություն է հաղորդում նկարչի բազմաբնույթ ստեղծագործություններին՝ ապահովելով դրանց անկրկնելի սարուխանական բնույթը:

Բանալի բառեր՝ զավեշտական, էքսպրեսիվ, չափազանցություն, գրոտեսկ, նկարագրող, դատարկապորտ քաղաքական գործիչ, շարժում, դիմախաղ:

Ներածություն

Սփյուռքահայ կյանքում Երվանդ Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի» գրքի հրատարակումը մշակութային նշանակալի երևույթ էր: Երգիծավեպը ձևավորեց Ալեքսանդր Սարուխանը (1898-1977), որը նորագույն շրջանի հայկական մշակույթի պատմության մեջ մտել ու գնահատվում է որպես հմուտ ծաղրանկարիչ¹: Ե. Օտյանի Փանջունին ինքնին ավարտուն և ընդհանրացված մի կերպար է՝ հայ իրականության մեջ առաջացած քաղաքական ար-

¹ Մեծ է Ալեքսանդր Սարուխանի (1898-1977) կշիռը արդի նկարչության մեջ: Իր մոտ կեսդարյա ստեղծագործական ճանապարհի ընթացքում նկարիչը ստեղծել է ավելի քան 20000 նկար (ծաղրանկարներ, կատականկարներ, շարժեր), թեմատիկ ժողովածուներ («Այս պատերազմը», «Տես խոսքերը», «Մենք մեր ակնոցով») և գրքի ձևավորումներ (Ե. Օտյան՝ «Ընկ. Բ. Փանջունի», Հ. Պարոնյան՝ «Մեծապատիվ մուրացկաններ»): Ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում նկարիչն արել է այն, ինչ կարողանում էր ամենալավն անել և, ի հետևանք, արժանացավ «Երգիծանկարչության նահապետ» կոչման, «Ժողովուրդները ժողովուրդներին» շքանշանի և այլ բարձր տիտղոսների, Saroukhan 1999, 9.

կածախնդրությունը մարմնավորող: Սարուխանի գծանկարային զգեստավորումով նա դարձավ ավելի հասկանալի ու ըմբռնելի:

Ե. Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի» գրքի ձևավորման ժանրաթեմատիկ համակարգը

Երվանդ Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի» գրքի հրատարակումը մշակութային նշանակալի երևույթ էր, որին անդրադարձան ականավոր շատ գրողներ՝ արձակագիր Միքայել Բյուրճյանը, բանաստեղծ Վահան Թեքեյանը և ուրիշներ:

Երգիծավեպը ձևավորելու պատիվը տրվեց երիտասարդ, բայց արդեն փորձառու նկարիչ Ալեքսանդր Սարուխանին (1898-1977)²: Սեփական թերթ ձևավորելու, դիմանկարի ժանրին անդրադառնալու, տեղական մամուլում առաջադրված թեման տեսողականորեն վերամարմնավորելու փորձը բավականին հարստացրել էր նկարչի նյութը պատկերավորելու հնարավորությունները: Ստեղծագործական լայն դիպագոնը նրան հնարավորություն ընձեռեց ուժերը փորձելու նաև գրքի նկարագարողման մեջ³:

Օտյանի վեպի նկարագարողումները բացահայտում են 30 տարին բոլորած երիտասարդ Ալեքսանդր Սարուխանի արդեն ձևավորված նկարելաոճը, նյութն արձարծելու նախընտրած մոտեցումները: Այստեղ նա հանդես է գալիս որպես գրքի ձևավորող: Մինչև առաջին գրքի նկարագարողումը Սարուխանը բազմիցս պատկերել է Օտյանի Փանջունու մարդկային նկարագիրը հիշեցնող կերպարներ: Ստանալով գրքի նկարագարողման պատվերը և անձամբ մտերիմ լինելով Օտյանի հետ՝ նկարիչը, ըմբռնելով վեպի ֆաբուլան, ճիշտ մեկնաբանեց նյութը և ստեղծեց դատարկապորտ քաղաքական գործչի համոզիչ, ընդհանրացված կերպարը: «-Եկուր քեզ հեղափոխական գործիչ շինենք, - ըսավ բարեկամը Փանջունուն, - խոսելու դյուրություն ունիս՝ այդ բավ է: Իսկ ան կը խոսեր, կը խոսեր ու կը խոսեր» (նկ. 1):

Սարուխանի ժամանակակից հայ նկարիչներ Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը խոսքի միջոցով ներկայացված աշխարհը վերակերպավորել են միջնադարի հայ վարպետների հարուստ փորձի արդիականացման ճանապարհով:

Սարուխանը, հաշվի առնելով Ե. Օտյանի երկի ստեղծման ժամանակաշրջանը, ազգային-աշխարհագրական-պատմամշակութային միջավայրը, գրքի հերոսների մարդկային խառնվածքը, նյութը տեսողաբար բացահայ-

² Տե՛ս Avedissian 1959, 79:

³ Ալ. Սարուխանը «Ընկ. Բ. Փանջունի» երգիծավեպը ձևավորում-նկարագարողում է 1934 թ., իսկ 1938-ին անձնական միջոցներով և որոշ մտավորականների օժանդակությամբ այն հրատարակում է իր 150 ծաղրանկարներով, հմմտ.՝ Ալետիսեան 1947, 109:

տել ու մեկնաբանել է XX դարի հումորիստական գրաֆիկայի ասպարեզում առաջադրված ռճաճաբանական ըմբռնումների տեսանկյունից:

Մատենական նկարչության ասպարեզում Սարուխանի արվեստը բնորոշող հատկանիշները նրա գրքապատկերները սերտորեն մերձեցնում են ժանրի դասական վարպետ Վիլիելմ Բուշի (1832-1908) ստեղծագործական ավանդույթներին՝ կոմիքսներին (տիպականացման ճանապարհով ստեղծված զվարճալի մարդուկների զավեշտական արկածները հերթական կադրերի միջոցով ներկայացնող եղանակ)⁴:

Այդ ավանդույթները նկարիչն ուսումնասիրել ու կիրառել է XX դարի մոդեռնիստական ուղղություններից մեկի՝ էքսպրեսիոնիզմի եղանակով և իր ստեղծագործական անհատականության, իրեն հետաքրքրող խնդիրների դիրքերից: Ե. Օտյանի երգիծավեպի սյուժետային նյութը նկարիչը միջոց դարձրեց քաղաքական արկածախնդրություն երևույթն ու խնդիրն արծարծելու համար, երևույթ, որը խիստ բացասական դեր է կատարել հայոց ճակատագրում՝ հատկապես XX դարի ազգային ու քաղաքական կյանքի վայրկերումներում:

Օտյանի վեպին հատուկ են կեսմտացածին, կեսհնարավոր կոմիկական ու զավեշտական իրադարձություններով հագեցած արկածային սյուժեն, սրընթաց գործողությունն ու պատկերների արագ փոփոխությունը, պատմելաճի ճկունությունն ու սրամտությունը: Դրան համահունչ էլ կատարված է գրքի ձևավորումը: Ձևավորելիս Սարուխանը նկատի է ունեցել ոչ միայն գրական նյութի բովանդակությունը, այլև երգիծաբանի հետ համագործակցության ժամանակ արտահայտված ընդհանուր գեղագիտական ու ռճաճաբանական ըմբռնումները: Որպես պատկերավոր մեկնաբանումներ՝ գրական խոսքին հետևում են բովանդակությունը բացահայտող վարպետորեն արված դիպուկ ծաղրանկարները: Նկարազարդումները միահյուսվում են երկի բովանդակությանը, տրամադրություններին ու գործողություններին: Դրանք սուր են, ինչպես երգիծաբանի խոսքը, շարժուն, ինչպես գործողությունները:

Երգիծավեպը բաղկացած է երեք մասից՝ «Ընկ. Բ. Փանջունի. Ի Ծապլվար», «Ընկ. Բ. Փանջունի Ի Վասպուրական», «Ընկ. Բ. Փանջունի, տարագրության մեջ: Իմ աշխարհայացքները»:

«Ընկ. Բ. Փանջունի» գրքի կազմն իր մտահղացմամբ, լակոնիկ կառուցվածքով և խոր ընդհանրացմամբ երկի ձևավորման ամենահաջողված բաղադրիչներից է: Նկարը արված է հետևյալ դրվագով. Փանջունին լայն քայլերով ընթանում է առաջ. «Իհարկե մեր պրոպականտը պետք է առաջ տանինք, ամեն տեղ, ամեն ժամանակ և ամեն կացության մեջ, - պատաս-

⁴ Կոմիքսը գրաֆիկական պատմողական ժանր է՝ կարճ տեքստով, որը ստեղծում է կապակցված պատում: Առաջին կոմիքսների նախատիպերն են համարվում Ու. Հոգարթի «Անբարոյական կնոջ կարիերան», «Վատնողի կարիերան», Большая Советская Энциклопедия 1973, 507:

խանեց ընկեր Փանջունի»: Պատկերը գրական նյութի խտացված տեսողական մարմնավորումն է: Հերոսի կրծքին սեղմած թղթապանակից թռչում են թերթեր ու տարածում նրա «մարքսիստական առաջադեմ գաղափարները»: Նկարի ֆոնը լուծված է հետին պլանում ուրվագծված բնապատկերով: Կոմպոզիցիան վերցված է շրջանագծի մեջ ու դրոշմված՝ կազմի ուղղանկյուն մակերեսի կենտրոնում: Շրջանը պարագծով բաժանված է երկու մասի և խորհրդանշում է ողջ աշխարհը, իսկ կիսաշրջանները՝ հերոսի անցած ուղին ու հետագա անելիքները: Ճակատանկարի եզրագծին զուգահեռ գրված հեղինակի անունն ու վեպի վերնագիրը պահպանում են կազմի հարթ բնույթը: Իսկ կոմպոզիցիոն սխեման՝ պլանների հերթագայությամբ (հերոսի ֆիգուրն ու պեյզաժային մոտիվը), իրացված է գլխավորապես կոշտ հպումով քաշված գծերի օգնությամբ (նկ. 2):

Վեպի առաջին և երկրորդ մասերի շմուցտիտուլները ծայնակցում են կազմի հետ թե՛ կոմպոզիցիայի լուծման, թե՛ կատարողական տեսակետից: Դրանք կազմված են շրջանի կամ ձվաձևի մեջ ուրվագծված բնապատկերից ու վերնագրից: Առաջին դեպքում՝ շրջանի սահմանից դուրս եկող գերանդին ձեռքին գյուղացին է ու հեռվում վարի տեսարանը, երկրորդում՝ Վանի քաղաքամեջը գլխավորող եկեղեցու պատկերը: Վեպի երրորդ մասն սկսվում է տիտղոսաթերթից: Յուրաքանչյուր մասի նախաբանը պսակված է Օտյանի գծանկար-պորտրետով (հեղինակը, գրասեղանի առջև նստած, գրում է վեպը):

Գրքի բաղադրիչ մասերը (առաջին, երկրորդ, երրորդ) բաժանված են այբբենական կարգով դասավորված գլուխների: Գլխազարդ սկզբնականները հորիզոնականով ծայրեծայր ձգված կոմպոզիցիաներ են: Դրանց մի մասը անմիջականորեն կերպավորում է տվյալ գլխին վերաբերող սյուժետային որևէ կարևոր իրադրություն: Օրինակ՝ սյուժետային լուծում են հանդես բերում հետևյալ գլխանկարները՝ ծապլվարցիները հարձակվում են դպրոցի շենքում թաքնված Փանջունու և նրա ընկերների վրա, Սարսափունին ոգևորում է մանկապարտեզի երեխաներին «ըմբոստացումի ոգին, որուն վրա հիմնված է բուն հեղափոխությունը», ծալապատիկ նստած Փանջունին «մարքսիստական գաղափարներ» է քարոզում քրդերին (նկ. 3):

Վերջին դրվագն աչքի է ընկնում երկի հերոսների դասավորության հավասարակշռությամբ ու կոմպոզիցիայի երկտարածական կազմակերպման համասեռությամբ: Սակայն այն իրացված է փոքր-ինչ կոպիտ գրչախազերի միջոցով, որի պատճառով զուգահեռ, խաչվող, բեկվող գծերի ցանցը չի ստեղծում կանոնավոր, միանշանակ դիմ:

Գլուխները պսակող նկարները կա՛մ տեքստի պասիվ վերարտադրություններ են (ռեալիստորեն պատկերված գյուղի, քաղաքի, բնության տեսարաններ), կա՛մ չափազանցման ու գրոտեսկի հասնող հիպերբոլացման ճանապարհով ստեղծված ծաղրանկարներ (գլխավոր հերոսն ու նրա ընկերները):



Նկ. 1. «Ընկ. Բ. Փանջունի» գրքի կազմը



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6



Նկ. 7

Նկ. 2-7. «Ընկ. Բ. Փանջունի» երգիծավեպի նկարազարդումներից

Հենց առաջին գլխի սկզբնականը, օրինակ, ամենայն հավաստիությամբ պատկերում է շարադրանքի սկիզբը. «Ծապվար՝ քսան տունն բաղկացած զուտ հայկական գյուղ մըն է, գեղեցիկ ու բարեբեր, հովիտի մը մեջ, ուրկե կանցնի Ջրբերիկ գետակը»: Երկրորդ մասն սկսվում է Վան քաղաքի բնանկարով: Ճեպանկար-գծանկարներում ամեն ինչ կրում է նահապետականության դրոշմը՝ ծխական ներփակ կյանքին հատուկ իր բնույթով:

Ե. Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի» գրքի նկարագարողումների կոմպոզիցիոն կառուցվածքը

Սարուխանական կերպավորմամբ պատկերների շղթան դինամիկ ու էքսպրեսիվ է: Յուրաքանչյուր էջի ընթերցումն ուղեկցվում է փոքր ու մեծ, հորիզոնականով և երկայնքով ծավալվող գծանկարներով, որոնք խախտում են տպագրական շարվածքի հանդարտ ռիթմը: Այս հնարքը շահեկան է գրական նյութի զավեշտաքննադատական բովանդակության բացահայտման համար: Հեղինակը նկարագարողման համար ընտրում էր պատումի զարգացման մեջ ամենակարևոր պահերը, որոնցում առավել վառ և լիարժեք են բացահայտվում երկի գաղափարն ու հերոսների բնավորությունները:

Կանգ առնենք նկարագարողման կարևոր հանգույցներից մեկի վրա, որը հետաքրքիր կերպավորմամբ ու կատարումով ներկայացնում է քրդերի կողմից կողոպտված Փանջունուն («...յանկարծ՝ զինեալ՝ վրաս յարձակեցան եւ զիս կողոպտեցին՝ գրեթե մօրէ մերկ ձգելով»): Այստեղ գործողությունները կատարվում են երկու հանդիպակաց սարերի ստորին մասում նկարված հարթավայրում: Ցածր դիտակետի հնարքի կիրառման պատճառով երկնքին տրամադրված է փոքր եռանկյունաձև հատված: Պլանների հաստատուն հերթականության պարագայում որոշ դետալների (սարեր, հարթավայր, երկինք) չափսերի փոփոխությունը պայմանավորված է դիտակետի տարբեր հեռավորությամբ (նկ. 4): Նույն մոտեցմամբ է լուծված միջավայրը հարբած «զինվորներին» եկեղեցու արշավի կոչ անող Սարսափունուն պատկերող գծանկարում:

Պատումի Սարսափունու հարբած «զինվորի» պարը նկարագրող դրվագը («Բէս Սերգօ վատաբար փռուեցաւ գետին, մեր քաջ ընկեր Ավօ ևս առիծի պէս ընկաւ... Կռուեցէք, տղերք, կռուեցէք քաջ-քաջ Անվեհեր կանգնած թշնամու առաջ...», «տղերքը սկսան պարել մի ինչ-որ մարտական պար, իրենց մերկ դաշոյներն օդին մէջ ճոճելով...») Սարուխանը ներկայացրել է տարածապլաստիկական սկզբունքի դրսևորման մեկ այլ տարբերակում: Նկարադաշտի վերին հատվածի աջ և ձախ եզրերից ծառի արմատն ու դեպի կենտրոն ձգված ճյուղերը շրջափակում են պատկերը, իսկ հեռվում երևացող դաշտերը, հորիզոնականով ծայրեիծայր ձգված սարերն ու դրանք մասամբ ծածկող կիսակորեքով կառուցած ամպերը դրան հաղորդում են հավաք տեսք: Արվեստագետը ծավալի, եռաչափ խորության

միջոցով հանգում է տարածական պատրանքի, որպեսզի ներկայացվող կերպարները, առարկաներն ու սյուժետային իրադարձությունն ընկալվեն իրականին համեմատելի բնականության ինչ-որ գծերով:

Գործողության վայրը մեկ-երկու տարբերակով կազմակերպելը ժանրին բնորոշ գեղարվեստական տիպականացման սկզբունքի արտահայտությունն է:

Նկարչի ուշադրության կենտրոնում է եղել գրվածքի հերոսների, նրանց տիպաժային-հոգեբանական հատկանիշների տեսողական արտացոլման հարցը: Այդ խնդրի լուծման համար նախ նա գծանկարել է վեպի կերպարների արտաքին նկարագիրը հիշեցնող բնորոշների դիմանկարներ և օժտել տեքստում նշված անուններով: Ապա, համաձայն իր սկզբունքի, սրման և չափազանցման ճանապարհով տարբեր չափի ձևախեղումների ենթարկել դրանց դիմաձևերը, կազմվածքը, վարքագիծը, հագուկապը: Այդ ամենը նա կատարել է ըստ իր հախուռն բնավորության, ըստ իր ինքնաարտահայտման պոռթկուն բնույթի:

Արդյունքում փարթամ մազերով, բեղ-մորուքով, ընդգծված արծվաքթով Փանջունու նախատիպ հանդիսացող ռեալիստորեն նկարված պորտրեն Սարուխանը վերածում է գրոտեսկի աստիճան աղճատված, սակայն այժմ նաև ներքին բնականությամբ օժտված գրքի կերպարի (նույն ճանապարհով են ստեղծվել Տեր Սահակի, Ռես Սերգոյի, Կոլոշենց Սեդոյի, Քելեշ Մրկոյի, Սարսափունու տիպաժները)⁵:

Մնացած գլխազարդ նկարներում Փանջունու պատկերն է. մի դեպքում վիպակի գլխավոր հերոսը պատկերված է երկգլխանի էակի տեսքով (մի գլուխը բարի, մյուսը՝ ըմբոստ), մյուս դեպքում՝ բերանի արտառոց բացվածքով և մեծ բռունցքներով: Նկարներ կան, որտեղ Փանջունու մի ձեռքին կշեռքն է, մյուս ձեռքի փոխարեն՝ անբնական մեծ բռունցք: Գլխավերևում՝ «Մենք օրենք ենք» կարգախոսը: Կամ էլ՝ ձախից աջ գծանկարած է կիսադեմ, դիմահայաց և երեք քառորդով շրջված հերոսի եռապատկերը, իսկ գլխավերևում՝ «Կոնտրոլ» նկարի իմաստը բացահայտող գրավոր խոսքը:

Ներշնչվելով վեպի գլխավոր հերոսի մեջ մարմնավորված մարդկային նկարագրի հանդեպ իր անզիջում վերաբերմունքով՝ հեղինակը Փանջունու դեմքը աղճատում է ծաղրադիմակի աստիճան և վերակերպավորումը կատարում սևուսպիտակի կտրուկ բախումների միջոցով: Այստեղ նյութի սուր ըմբռնումն ու կերպավորման գերարտահայտչականությունը ի հայտ են բե-

⁵ «Արես» թերթում տպագրված են Օտյանի վեպի հերոսների՝ Սարուխանի գծանկարած նախապատկերի պորտրետները և դրանց անունները՝ ընկ. Փանջունի, Ռես Սերգո, Կոլոշենց Սեդո և այլն, «Արես», Գահիրե, 10.08.1937:

րում «Սև հումորի» ուղղությանը բնորոշ հատկանիշ (սարսափի հասնող արտակարգ հիպերբոլացում) (նկ. 5)⁶:

Պատկերագարողներն ըստ ձևի բազմազան են: Կան երկայնակի նկարներ, որտեղ տեքստին վերապահված է թղթի ստորին մասը, կան նաև թղթի ամբողջ տարածքը զբաղեցնող պատկերներ: Հաճախ մեկ էջի վրա տարբեր անկյուններում տեղադրված են հերոսների՝ Փանջունու, Սարսափունու՝ հարաբերաչափերով փոքր ֆիգուրներն ու լայնքով կամ երկայնքով ձգված պատկերներ: Գրքի որոշ էջերի մի մասը զբաղեցնում է գծանկարը, մյուս մասը՝ տեքստը, իսկ ներքևի անկյունում զետեղված հերոսի փոքրիկ ֆիգուրն ասես կենդանի մասնակցություն է բերում գրական գործողությանը: Դա միջոց է, որով արվեստագետը նկարադաշտի երկտարածական մակերեսից անջատել է մարդակերպ կտրվածքներ՝ երևակելով դրանց սեղմ ուրվանկարը:

Փոքր զվարճալի ֆիգուրների և մեծ գծապատկերների տեղադրումը մեկ էջի վրա ավելի ցայտուն է դարձնում վեպի երգիծական հենքը: Միևնույն ժամանակ փոփոխելով գրչանկարների չափսերը՝ հեղինակը պահպանում է Օտյանի շարադրանքին համահունչ ռիթմը:

Ինչպես տեքստում, պատկերագարողման մեջ ևս ընդգրկված նյութը (մարդիկ, եղելություններ և այլն) դիտված է չափազանցումների, ծիծաղի, ծաղրանքի, խաղի ներկայացման ու երբեմն «Սև հումորի» տեսանկյունից⁷: Դա երևում է գլխավորապես գործող անձանց դիմախաղի ու ժեստերի մեջ: Օրինակ՝ հրեշտակի կերպարանքով Փանջունին և Սարսափունին ճախրում են երկնքում: Նկարը պահվում է դեկորատիվ-հարթապատկերային միասնական ոճի մեջ, որովհետև թղթի երկչափ մակերևույթին դրոշմված ֆիգուրները սահուն եզրագծված են (նկ. 6):

Կանգ առնենք տարբեր դիմախաղերով, ժեստերով ու կեցվածքներով գծանկարած Փանջունու ութ երգիծադիմակներից բաղկացած հավաքական կոմպոզիցիայի վրա: Նկարելու միջոցը տարբեր սեղմումներով քաշված ճկուն գիծն է: Չափահարաբերական կառուցվածքով նկարադաշտը ուղղահայաց վեր ձգված մակերես է: Նկարիչը ձևերի փոխհարաբերության

⁶ «Սև հումորի» ակունքներն են համարվում անգլոսաքսոնական բանավոր անեկդոտը, Կաֆկայի ստեղծագործությունն ու սյուրռեալիզմ ուղղությանը բնորոշ աշխարհընկալումը: 1938 թ. Ֆրանսիայում սկսեց հրատարակվել «Շեղվածների կատակներ» հումորիստական թերթիկը: Այստեղ էին աշխատում Ժ. Էֆֆելը, Մ. Սինեն, Լ. Միտելբերգը, Дмитриева 1973, 254:

⁷ Եթե «Սև հումոր» տերմինը կարելի է նորամուծություն համարել, ապա նման ուղղություն ինքնին նորություն չէ: Այդ մոտեցմամբ են ստեղծված ժանրի դասական, գերմանացի նկարիչ Վիլհելմ Բուշի «Մաքսի և Մորիսի չար կատակները» մանկական գրքերի ծաղրանկարները, որոնք, ի դեպ, նախանշում են նորագույն ժամանակներում ժանրում կատարվող ոճական և կատարողական փոփոխությունները, Busch 1903:

ազատ ու շարժուն դիմավորմամբ հավասարակշռել է հատվածն ու հմտությամբ զուգորդել այն գրերի հետ (նկ. 7):

Եզրակացություններ

Երվանդ Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի» գրքի ձևավորումը՝ ընդհանուր կառուցվածքով և առանձին բաղադրիչների տարածաժամանակային դասավորության հաջորդական ընկալման դիմով, դիտման ընթացքում դրսևորվում է իբրև ամբողջական մեխանիզմ:

Կոմիկական իրադարձություններով հագեցած արկածային սյուժեով երգիծավեպի սարուխանական տեսողական բացահայտումն ու մեկնաբանումն աչքի են ընկնում գրական նյութի բացառիկ զգացողությամբ:

Ալեքսանդր Սարուխանի նկարազարդումները արժանի փայլ են հաղորդում Ե. Օտյանի երգիծավեպին և վկայում, որ ծաղրանկարի սկզբունքները մեծ հաջողությամբ կարող են մուտք գործել գրքի նկարազարդման բնագավառ:

Օգտագործված գրականություն

Արև, Գահիրե, 10.08.1937:

Աւետիսեան Օ. 1947, Ծաղրանկարիչ Ալ. Սարուխան, Անի, Պէյրութ, Տպագրութիւն «ռոթոս»-ի, թիւ 2, 112 էջ:

Օտյան Ե. 1938, Ընկ. Բ. Փանջունի (Պատկերազարդեց Ալ. Սարուխան), Գահիրե, Սահակ-Մեսրոպ, 230 էջ:

Большая Советская Энциклопедия 1973, т. 12, Москва, «Советская энциклопедия», 624 с.

Дмитриева Н. 1973, Юмор парадоксов, Иностранная литература, N 6, Москва, 288 с.

Saroukhan A. 1999, Album, Cairo, Nubar printing house, 144 p., illus.

Avedissian O. 1959, Peintres et sculpteurs Arméniens, Le Caire, publié par les "Amis De La Culture Arménienne", 492 p.

Busch W. 1903, Album mit 1500 Bildern, München, Verlag von St., Battermann, 323 S.

ОБ ИЛЛЮСТРАЦИЯХ К САТИРИЧЕСКОМУ РОМАНУ ЕРВАНДА ОТЯНА «ТОВ. Б. ПАНДЖУНИ»

Сатеник Меликян

Резюме

Издание книги Ер. Отяна «Тов. Б. Панджуні» явилось знаменательным событием в культурной жизни армянской диаспоры Египта. Оформление книги было поручено известному художнику-карикатуристу Александру Сарухану (1898-1977), который впервые в истории армянского книгопечатания оформил ее сатирическими рисунками и карикатурами. Литературный текст и рисунки настолько сопоставимы, что, как в прочтении, так и в просмотре материала

превалирует характерное для сатирического жанра преувеличение, экспрессия, гротеск, которыми пропитаны сценки неудержимого веселья, мордобоя и т.д.

В жестах, в мимике, в поведении героев романа наблюдается крайняя напряженность. Мизансцена как бы разыгрывается перед реалистично представленными декорациями – фоном рисунка. Этот контраст двух мировоззрений, двух подходов к решению поставленной задачи в свою очередь усиливает экспрессию действия и создает сугубо театральную, сарухановскую атмосферу. Некая театральность в работах Александра Сарухана придает им особую привлекательность и является одной из характеристик творчества художника-карикатуриста.

Ключевые слова – комический, экспрессивный, гротеск, иллюстрация, ничемный политический деятель, мимика, жесты.

ABOUT ILLUSTRATIONS TO YERVAND OTYAN'S SATIRICAL NOVEL "COMRADE B. PANJUNI"

Satenik Melikyan

Abstract

Publication of Yer. Otyan's book "Comrade. B. Panjuni" was a significant event in the cultural life of the Armenian diaspora in Egypt. The design of the book was entrusted to the famous cartoonist Alexander Sarukhan (1898-1977), who for the first time in the history of Armenian book printing designed it with satirical drawings and caricatures. The literary text and drawings are so comparable that, both in reading and viewing the material, the extreme exaggeration, expression, grotesque characteristic of the satirical genre prevails, with which the scenes of irrepressible fun, scuffle, etc. are saturated.

In gestures, in facial expressions, in the behavior of the heroes of novel extreme tension is observed. The mise-en-scene, as it were, is played out in front of realistically presented scenery – the background of the picture. This contrast of two worldviews, two approaches to solving the set task, in turn, enhances the expression of the action and creates a purely theatrical, Sarukhanov atmosphere. A certain theatricality in the works of Alexander Sarukhan gives them a special appeal and is one of the characteristics of the cartoonist's work.

Key words – comic, expressive, grotesque, illustration, worthless politician, facial expressions, gestures.